

8371



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմոնյան
« 05 » 08 2024թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 148 - 24

Նախաձեռնող՝

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ
Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, Չարենցի փ., 198/2-2

Գործունեությունը՝

«Լոռի-2» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված
տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա
միջավայրի վրա ազդեցության ուղղման արդյունքների
էկոլոգիական գնահատման հաշվետվություն
Լոռու մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 148 - 24

«05» օգոստոսի 2024թ.

«Լոռի-2» միկրոռեզիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝
Ներկայացված նյութեր՝

Գտնվելու վայրը՝

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ
Նախագծային փաստաթղթեր,
ՇՄԱՌԳ հաշվետվություն
Լոռու մարզ

Ներածական մաս. «Լոռի-2» միկրոռեզիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը ներառում է Ալավերդի խոշորացված համայնքի, Ալավերդի քաղաք, Ակներ, Աքորի, Ծաղկաշատ, Կաճաճկուտ, Հաղպատ, Զիլիզա, Ախթալա քաղաք, Ախթալա գյուղ, Առողջարանին կից գյուղ, Բենդիկ, Ճոճկան, Մեծ Այրում, Նեղոց, Շամլուղ քաղաք, Փոքր Այրում, Շնող, Թեղուտ, Քարկոփ, Օծուն, Ամոջ, Այգեհատ, Արդվի, Արևածագ, Ծաթեր, Կարմիր Աղեկ, Հազվի, Մղարթ բնակավայրերը:

Նախագծային փաստաթուղթը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, հանդիսանում է հիմնադրութային փաստաթուղթ:

Նկարագրական մաս. Լոռի-2 միկրոռեզիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի մշակման հիմնական նպատակը ներառված համայնքներում տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորում է, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, ռեկրեացիոն ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, ինժեներատրանսպորտային և սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքների զարգացումը, բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանության ապահովումը, տարածքային զարգացման հիմնական ուղղությունների ընտրությունը, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումը, շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների պահպանմանն ուղղված միջոցառումների մշակումը:

«ԼՈՌԻ-2» միկրոռեզիոնի տարածաշրջանը ներառում է 74,034.28 հա հողեր, այդ թվում՝

- գյուղատնտեսական հողեր – 9990.85 հա,
- բնակավայրեր – 983.22 հա,
- արդյունաբերության – 171.87 հա,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի – 178.62 հա,
- հատուկ պահպանվող տարածքներ – 110.27 հա,
- հատուկ նշանակության – 6.0 հա,
- անտառային – 17967.38 հա,



- ջրային – 105.67 հա,
- պահուստային – 0 հա:

Տարածքային զարգացման հիմնական առաջնային ուղղությունների ընտրությունը կխթանի.

- արտադրության գոյություն ունեցող հիմնական ճյուղերի զարգացմանը,
- հնարավոր ռեկրեացիոն գոտիների կազմակերպմանը,
- շրջակա միջավայրի բարելավմանն և պահպանմանը,
- ինժեներական ենթակառուցվածքի, ճանապարհային ցանցի և սոցիալ-կենցաղային համակարգի զարգացմանը,
- պատմամշակութային ժառանգության պահպանությանը,
- բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը,
- սահմանամերձ տարածքներում բնակչության անվտանգության ապահովմանը,
- միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհները կապող

հատվածների վերանորոգմանը, միջհամայնքային ճանապարհների-կապերի վերանայմանն ու կազմակերպմանը,

- բացառել գյուղատնտեսական բարձորակ և հատուկ պահպանվող տարածքների օտարումը, ինչպես նաև պատմամշակութային և բնական հուշարձաններին վնաս պատճառելը,
- հիմնական գործառնական գոտիների վերանայմանն ու հստակեցմանը,
- բոլոր համայնքների գազաֆիկացմանը,
- համայնքներում բնակչության խմելու ջրով ապահովմանը,
- համայնքներում ոռոգման ջրի ցանցի արդիականացմանն ու ընդլայնմանը,
- աղբավայրերի նախատեսմանը (սանիտարական գոտիների պահպանմամբ),
- բոլոր գյուղական բնակավայրերի կոյուղացմանը,
- գյուղական բնակավայրերի կեղտաջրերի մաքրման կայանի նախագծմանն ու գործարկմանը,

- նոր տեխնոլոգիաների՝ ջեռուցման ժամանակ արևային էներգիա և բիոգազ, ներդրմանը
- աղբի տեսակավորմանը:

«ԼՈՌԻ-2» տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագծում սանիտարապաշտպանիչ գոտիների և սանիտարական խզման չափերն ընդունված են համաձայն CH245-71 «Արդյունաբերական ձեռնարկությունների նախագծման սանիտարական նորմեր»-ի:

Էլեկտրատեխնոլոգիայի ՍՊԳ-ի չափերն ընդունված է դրանց տիպից, տրվող լարումից, տրանսֆորմատորի հզորությունից և քանակից ելնելով:

Հաշվի առնելով մարզի կլիմայական պայմանները՝ որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր կարելի է դիտարկել արևային էներգիան:

-Մայրուղային խողովակաշարերից սանիտարական խզման չափերն ընդունված են խողովակների տրամագծից, ճնշումից և դասից կախված՝ համաձայն ՄՆ և Կ 2.05.06-85-ի:

-Խմելու-տնտեսական ջրառների ՍՊԳ-ի չափերն ընդունված են համաձայն ՄՆ և Կ 2.04.02-84 «Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»-ի:

-Գերեզմանների ՍՊԳ-ն ընդունված է 300 մ:

- Աղբահավաք վայրերի քանակը՝ 14 է, դրանց համար ՍՊԳ-ն ընդունված է 300 մ:

-Կենսաբանական մաքրման կայանի ՍՊԳ-ն ընդունված է 300 մ: ՄՆ և Կ 2.04.03-85 Կոյուղի: Արտաքին ցանցեր և կառուցվածքներ:

-Օրգանական ծագման թափոնների վարակազերծման և թաղման վայրերի ՍՊԳ-ն ընդունված է 300 մ:

Լոռի-2 Թումանյանի դիտարկվող տարածաշրջանի բնակավայրերի ջրամատակարարման տեխնիկական վիճակն անբավարար է: Բնակավայրերի մի մասի ջրամատակարարման ցանցերն ունեն արդիականացման կարիք:



Համայնքների ջրամատակարարումն իրականացվում է հիմնականում Ստեփանավանի տարածաշրջանի աղբյուրներից 5 ջրամատակարարման համակարգերով՝ Նովոսելցովո, Լեռնաջուր, Մայմեխ, Սպիտակջուր, Ղադրիձոր, հորերից և Փամբակ գետից (միայն մեկ թաղամաս):

Ջրամատակարարման ներքաղաքային բաշխիչ ցանցը չունի ջրամատակարարման գոտիներ, որոնց բացակայությունը դժվարեցնում է համակարգի շահագործումը: Ջրամատակարարման գլխամասային կառույցները և գոյություն ունեցող օրվա կարգավորիչ ջրամբարների սանիտարական պահպանության առաջին գոտիները, ինչպես նաև ամբողջ ցանցը կարիք ունեն կապիտալ վերանորոգման: Քլորակայանները գտնվում են ոչ բարվոք վիճակում:

-Ջրամատակարարման համակարգերի կայուն աշխատանքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է վերջիններիս արդիականացում և վերակառուցում,

-բնակչությանն անհրաժեշտ քանակի խմելու ջրով բավարարելու նպատակով առաջարկվում է բնակավայրերի տարածքում պահանջվող ծավալով օրվա կարգավորիչ ջրամբարների նախատեսում,

-բոլոր բնակավայրերում խմելու ջրամատակարարման օղակային բաշխիչ ցանցի նախատեսում՝ ապահովված հակահրդեհային հիդրանտներով,

-ջրամատակարարման բոլոր համակարգերում (գլխամասային կառույցներ, ՕԿՁ-ներ) հերմետիկության ապահովում և սանիտարական 1-ին (30-50 մ շառավղով) գոտու սահմանում,

-խմելու ջրի վարակազերծման նպատակով ջրամատակարարման գլխամասային կառույցներում քլորակայանների նախատեսում,

-խմելու ջրի պարբերաբար լաբորատոր հսկողություն,

-ջրի սպառման նկատմամբ վերահսկողության սահմանում, ջրաչափերի տեղադրում բոլոր սպառողների մոտ,

-հոսակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված անընդհատ աշխատանքների իրականացում:

Գյուղական բնակավայրերի բնակչությունն օգտվում է բակային հորատիպ զուգարաններից: Ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից զերծ պահելու նպատակով սույն նախագծի շրջանակում նախատեսվում է կոյուղացնել տարածաշրջանի բոլոր բնակավայրերը: Կոյուղու հոսքաջրերի հեռացումն իրականացվելու է միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի միջոցով: Նախատեսվող հեղեղատար կոյուղին հնարավորություն կտա անձրևաջրերի և հալոցքից առաջացած հոսքաջրերի ամբողջ ելքը ևս հավաքել և ենթարկել մաքրման: Նախատեսվում է 2000.0 մ³/օր հզորությամբ մաքրման կայան Ախթալա քաղաքի ներկայումս չգործող պահածոների գործարանի մաքրման կայանի տարածքում: Անձրևաջրերի հեռացման փակ համակարգի դեպքում խողովակաշարերի տրամագծերը նախատեսվում է ընդունել ոչ պակաս՝ 250 մմ փողոցային ցանցի համար, 200 մմ՝ ներթաղամասային ցանցի համար:

Ներկայումս դիտարկվող տարածաշրջանում որևէ գործող կենտրոնական կաթսայատուն չկա: Բնակավայրերի ջերմամատակարարումն իրականացվում է ինչպես գազի վառարանների, այնպես էլ էլեկտրական տաքացուցիչների միջոցով, բնակելի տների ջեռուցման նպատակով որոշ բնակիչներ օգտագործում են նաև փայտի վառարաններ:

Լոռի-2 միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի գազի հեռանկարային տարածական ընդհանուր պահանջարկը կկազմի մոտ 10.5 մլն մ³:

Դիտարկվող միկրոռեգիոնի բնակավայրերում ոռոգումն իրականացվում է մեխանիկական եղանակով, պոմպակայանների վիճակը բավարար է, հիմնական ջրաղբյուրը Փամբակ գետն է:



Նշված բոլոր բնակավայրերում ոռոգման ներտնտեսային ցանցի կառուցման անհրաժեշտություն կա:

Հաշվի առնելով ոռոգման կանոնավոր բաշխիչ ցանցերի բացակայությունը արդյունավետ ոռոգում ապահովելու նպատակով նպատակահարմար է բնակավայրերի տարածքում նախատեսել փակ խողովակաշարերով ոռոգման ներտնտեսային բաշխիչ ցանց:

Մարզում համակարգված աղբահանություն իրականացվում է հիմնականում քաղաքային բնակավայրերում՝ ամենօրյա և շաբաթական ռեժիմներով:

Միկրոռեգիոնում ներառված Ալավերդի համայնքի վարչական տարածքում տեղադրված է թվով 500 աղբաման: Գյուղական բնակավայրերում չկան պահանջվող նորմերին համապատասխան աղբավայրեր: Աղբահանությունը կատարվում է պայմանագրային հիմունքներով:

Սույն նախագծով նախատեսվում է գոյություն ունեցող աղբավայրերի տարածքները սանիտարական աղբավայրի պահանջներին համապատասխան պարսպապատել, բարեկարգել, կանաչապատել:

«ԼՈՌԻ-2» միկրոռեգիոնի սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 29513.88 հա մակերես:

Միկրոռեգիոնի բնակավայրերում առկա է 34 գերեզմանոց՝ ընդհանուր 78.8 հա մակերեսով, որոնցից գրեթե բոլորը գործող են: Դրանց զգալի մասի նորմերով պահանջվող սանիտարական գոտին պահպանված չէ: Գերեզմանոցները պարսպապատված չեն:

Սույն նախագծով նախատեսվում է.

- գերեզմանոցների պարսպապատում՝ հետագա հուղարկավորումների ընթացքում այն չխախտելու համար,

- այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում,

- այն բնակավայրերում, որտեղ կա հնարավորություն՝ գերեզմանոցի և բնակավայրի միջև սանիտարական պաշտպանիչ կանաչապատ գոտու նախատեսում,

- մոտեցնող ճանապարհների խճապատում,

- գերեզմանատների մուտքային հատվածներում ապահովել գործող նոմերի պահանջներին համապատասխան ավտոկայանատեղեր, խմելու ջրի ցայտաղբյուր:

Համայնքներում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը: Գյուղերում ճանապարհները հիմնականում տեղական նշանակության են և մեքենաների անցուդարձը ցածր է: «ԼՈՌԻ-2» տարածաշրջանի բնակավայրերում ձայնի էկվիվալենտ մակարդակը 25մ հեռավորության վրա ճանապարհից, հաշվի առնելով կառուցապատված զանգվածը կկազմի 39-40 դԲԱ, նորման 45-55 դԲԱ:

Արդյունաբերական թափոնների ընդհանուր քանակը կազմում է 15.5 տ/տարի:

Քանի որ համայնքը չունի արդյունաբերական թափոնների համար առանձին աղբավայր, ուստի ոչ օգտագործելի թափոնները թափվում են կենցաղային աղբավայր:

Շրջակա միջավայրի իրավիճակի և մարդու առողջության բարելավմանը նպաստող միջոցառումները և նախագծային լուծումները հետևյալն են՝

- երկրորդական և միջգյուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում, -գծանշման աշխատանքների իրականացում Վանաձոր համայնքի բնակավայրերի ասֆալտապատ փողոցներում,

-բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում, խաղահրապարակների կառուցում,

-շենքերում էներգետիկ արդյունավետությունն ապահովող միջոցառումների իրականացում,



-շենքերի բակերի լուսավորության անցկացում և գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում,

-ջրամատակարարման համակարգի և կոյուղու կառուցման համակարգերի բարելավում և բարեկարգում,

-անձրևաջրերի հեռացման համակարգի նախագծում և կառուցում,

-գետ թափվող հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի վերակառուցում, նախագծում և կառուցում,

-Փամբակ գետի աղտոտված լինելու հանգամանքով պայմանավորված նոր մաքրման կայանի կառուցում,

-Վանաձոր քաղաքի ջրամատակարարման ցանցի մաշված հատվածների վերանորոգում,

-էներգաարդյունավետությանը և վերականգնվող էներգիայի աղբյուրների ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում,

-Նախատեսվելու է մաքրման կայանի վերակառուցում ապահովելով մյուս բնակավայրերի կեղտաջրերը (լրիվ բիոլոգիական մաքրում և կրկնակի մաքրում), վնասված հասարակական և արտադրական նշանակության շինությունների և կառույցների վերակառուցում և հիմնանորոգում,

-ոռոգման ներքին ցանցի վերականգնում,

-ջրամբարների կառուցում՝ ջրի արդյունավետ օգտագործման նպատակով,

-կաթիլային ոռոգման համակարգի ներդրում,

-համայնքի բնակավայրերում հանգստյան գոտիների ստեղծում,

-համայնքների տարածքում աղբահանման և աղբի տեսակավորման կազմակերպում,

-ներդնել աղբահանության ինտեգրված համակարգ՝ տարածաշրջանային սանիտարական աղբավայրի և փոխաբեռնման կայանների կառուցմամբ, որը հնարավոր է սպասարկի 2 մարզ,

-մսի վերամշակման արտադրամասի ստեղծում (սպանդանոցի կառուցում),

-հեղեղապաշտպան անտառատնկումների իրականացում,

-ճանապարհի եզրերին, ռեկրեացման գոտիներում կանաչապատման, ծառատնկման աշխատանքների իրականացում,

-անտառների հիմնման և ընդլայնման աշխատանքների իրականացում,

-խիստ վերահսկողության սահմանում մեքենաների տեխնիկական վիճակի և որակի վրա, ինչը կնպաստի ավտոտրանսպորտի արտանետումների կրճատմանը,

-անցնել լրիվ գազով և ժամանակակից ջեռուցման տեխնոլոգիաներին, ինչը կկրճատի մթնոլորտ արտանետումները՝ տարեկան 39.47 տ/տարի,

-արդյունաբերությունում ներդնել առաջատար տեխնոլոգիաներ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կանխելու նպատակով,

-գյուղատնտեսական հողերի բերրիության բարձրացման ուղղված միջոցառումներ,

-Հայաստանի կլիմայի փոփոխության բացասական հետևանքների մեղմման համար հարմարվողականության միջոցառումների նախատեսում,

-Ընդերքօգտագործման հետևանքով խախտված տարածքների/պոչամբարների ռեկուլտիվացում/փակում:

«ԼՈՒԻ-2» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծի գործունեության ընթացքում առաջարկվում է իրականացնել ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ) և հետնախագծային վերլուծություն:

-Բուսական աշխարհի պահպանության միջոցառումներ,

-Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախագծով նախատեսված միջոցառումները



իրագործվում են արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների սահմաններում և նոր տարածքներ գրեթե չեն ներառում,

- Կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ,
Լոռու մարզի տարածքը հարուստ է պատմամշակութային և բնության, ջրագրական հուշարձաններով, պետական արգելավայրերով:

Փորձաքննական պահանջներ

Հիմնադրությամբ փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

- Միկրոռեգիոնում քաղաքաշինական հեռանկարային լուծումներն իրականացնելիս բացառել հուշարձանների և դրանց պատմական միջավայրի պահպանական գոտիների օգտագործման ռեժիմի խախտումը, անտառային և ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների հողերի նպատակային նշանակության փոփոխությունները, պահպանել սահմանված կարգով հաստատված, բնակավայրերի գլխավոր հատակագծերում ներառված կանաչապատ տարածքների, զբոսայգիների և այլ ընդհանուր օգտագործման տարածքների մակերեսները կամ դրանց փոփոխման դեպքում, բնակավայրերի այլ հատվածներում նախատեսել համարժեք տարածքներ:

- Հիմնադրությամբ փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Լոռի-2» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Գոհար Մինասյան